

1 մարտի 2018 թվականի N 248 - Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2005 ԹՎԱԿԱՆԻ
ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 22-Ի N 2328-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության կառավարությունը **ո ր ո շ ու մ է.**

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 22-ի «Հայկական ատոմային էլեկտրակայանի միջուկային և (կամ) ճառագայթային վթարների դեպքում բնակչության պաշտպանության ազգային պլանը (հայկական ատոմային էլեկտրակայանի արտաքին վթարային պլան) հաստատելու մասին» N 2328-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխություններն ու լրացումները՝

1) որոշման ամբողջ տեքստում և N 1 հավելվածում

ա. «Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի» բառերը և դրանց հոլովաձևերը փոխարինել «Հայաստանի Հանրապետության տնտեսական զարգացման և ներդրումների» բառերով և դրանց համապատասխան հոլովաձևերով,

բ. «Հայաստանի Հանրապետության տրանսպորտի և կապի» բառերը և դրանց հոլովաձևերը փոխարինել «Հայաստանի Հանրապետության տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների» բառերով և դրանց համապատասխան հոլովաձևերով,

գ. «Հայաստանի Հանրապետության էներգետիկայի և բնական պաշարների» բառերը և դրանց հոլովաձևերը փոխարինել «Հայաստանի Հանրապետության էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների» բառերով և դրանց համապատասխան հոլովաձևերով,

դ. «Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարություն» բառերը և դրանց հոլովաձևերը փոխարինել «Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր քաղաքաշինության պետական կոմիտե» բառերով և դրանց համապատասխան հոլովաձևերով,

ե. «Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտե (այսուհետ՝ ՀՀ ՏԿՆ ՋՏՊԿ)» բառերը և դրանց հոլովաձևերը փոխարինել «Հայաստանի Հանրապետության էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտե (այսուհետ՝ ՀՀ ԷԵԲՊՆ ՋՏՊԿ)» բառերով և դրանց համապատասխան հոլովաձևերով,

զ. «Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր միջուկային անվտանգության պետական կոմիտե» բառերը և դրանց հոլովաձևերը փոխարինել «Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր միջուկային անվտանգության կարգավորման պետական կոմիտե» բառերով,

է. «Հարավ-Կովկասյան երկաթուղիներ» բառերը փոխարինել «Հարավկովկասյան երկաթուղի» բառերով,

ը. «Հայպետհիդրոմետի» բառը փոխարինել «Հիդրոոլերևութաբանության և մթնոլորտային երևույթների վրա ակտիվ ներգործության ծառայության» բառերով.

2) որոշման N 1 հավելվածի 4-րդ կետի 14-րդ ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«14) Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի օգոստոսի 18-ի «Վտանգավոր տարածքից բնակչության, նյութական և մշակութային արժեքների տարահանման կարգը հաստատելու մասին» N 1180-Ն որոշում.».

3) որոշման N 1 հավելվածի 4-րդ կետի 17-րդ ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«17) Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի ապրիլի 6-ի «Հայաստանի Հանրապետության տարածքում արտակարգ իրավիճակների առաջացման կամ դրա սպառնալիքի, Հայաստանի Հանրապետության վրա զինված հարձակման, դրա անմիջական վտանգի առկայության կամ պատերազմ հայտարարելու դեպքում ու ռազմական դրության պայմաններում պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների, կազմակերպությունների, բնակչության ազդարարման և իրազեկման կարգը սահմանելու և Հայաստանի Հանրապետության կառավարության մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասին» N 346-Ն որոշում.».

4) որոշման N 1 հավելվածի 4-րդ կետի 18-րդ ենթակետն ուժը կորցրած ճանաչել.

5) որոշման N 1 հավելվածի 4-րդ կետի 19-րդ ենթակետն ուժը կորցրած ճանաչել.

6) որոշման N 1 հավելվածի 4-րդ կետի 20.1-ին ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«20.1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի մարտի 3-ի «Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկ ստեղծելու, Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության կանոնադրությունն ու աշխատակազմի կառուցվածքը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության մի շարք որոշումներում փոփոխություններ կատարելու մասին» N 259-Ն որոշում.».

7) որոշման N 1 հավելվածի 4-րդ կետի 23-րդ ենթակետում, ինչպես նաև N 7 հավելվածի 109-րդ կետում «Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի հունվարի 30-ի «Արտակարգ իրավիճակների և քաղաքացիական պաշտպանության բնագավառներում Հայաստանի Հանրապետության պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու կազմակերպությունների պատրաստման և բնակչության ուսուցման կարգը սահմանելու մասին» N 134-Ն որոշման» բառերը փոխարինել «Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի հունվարի 22-ի «Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության ոլորտներում Հայաստանի Հանրապետության պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների ու կազմակերպությունների պատրաստման և տվյալ ոլորտների հիմնահարցերով բնակչության ուսուցման կարգն ու ծրագիրը սահմանելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի հունվարի 30-ի N 134-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 46-Ն որոշում» բառերով:

8) որոշման N 1 հավելվածի 6-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«6. ՀԱԷԿ-ում հնարավոր են հետևյալ վթարային իրավիճակները՝

ա. «Ընդհանուր վթար», երբ միջուկային ռեակտորից տեղի է ունեցել ռադիոակտիվ նյութերի արտանետում կամ արտահոսք շրջակա միջավայր, կամ կա այդպիսի արտանետման կամ արտահոսքի իրական սպառնալիք.

բ. «Տեղական վթար», երբ միջուկային ռեակտորից տեղի է ունեցել ռադիոակտիվ նյութերի արտանետում կամ արտահոսք, որը դուրս չի եկել շրջակա միջավայր կամ կա այդպիսի արտանետման կամ արտահոսքի իրական սպառնալիք.

գ. «Տագնապ», երբ ատոմային կայանում տեղի է ունեցել ռեակտորի տեխնոլոգիական պարամետրերի շեղում, որը կարող է հանգեցնել ատոմային կայանի անվտանգ

շահագործման սահմանների գերազանցման, կամ խախտվել են ատոմային կայանի անվտանգ շահագործման պայմանները:»:

9) որոշման N 1 հավելվածի 7-րդ կետի 3-րդ ենթակետի «գ» պարբերությունից հանել «գնահատման ու դրա» բառերը.

10) որոշման N 1 հավելվածի 7-րդ կետի 9-րդ ենթակետի «բ» պարբերությունն ուժը կորցրած ճանաչել.

11) որոշման N 1 հավելվածի 7-րդ կետի 10-րդ ենթակետի «դ» պարբերությունը «տարահանման բժշկական ապահովումը» բառերից առաջ լրացնել «ռադիոակտիվ աղտոտված գոտում հայտնված մարդկանց» բառերով.

12) որոշման N 1 հավելվածի 7-րդ կետի 10-րդ ենթակետի «ե» պարբերությունը «ռադիոակտիվ աղտոտված գոտուց տուժածների սանիտարական մաքրման կազմակերպումը.» բառերից առաջ լրացնել «շահագրգիռ գերատեսչությունների հետ համատեղ» բառերով, և «կազմակերպումը.» բառը փոխարինել «իրականացումը.» բառով.

13) որոշման N 1 հավելվածի 7-րդ կետի 11-րդ ենթակետի «ա» պարբերությունից հանել «ցամաքային» բառը.

14) որոշման N 1 հավելվածի 7-րդ կետի 11-րդ ենթակետի «բ» պարբերությունը «փրկարարական աշխատանքների իրականացման համար ուժերի և միջոցների տրամադրումը.» բառերից առաջ լրացնել «բնակչությանը» բառով.

15) որոշման N 1 հավելվածի 7-րդ կետի 11-րդ ենթակետի «գ» պարբերությունը «սանիտարական և հատուկ մշակման կետերի ծավալումը.» բառերից առաջ լրացնել «ռադիոակտիվ աղտոտված գոտում հայտնված զինված ուժերի ստորաբաժանումների սպառազի-

նության և տեխնիկայի, ինչպես նաև քաղաքացիական բնակչության և տեխնիկական միջոցների վարակազերծման համար» բառերով.

16) որոշման N 1 հավելվածի 7-րդ կետի 11-րդ ենթակետի «դ.1» պարբերությունն ուժը կորցրած ճանաչել.

17) որոշման N 1 հավելվածի 7-րդ կետի 17-րդ ենթակետի «գ» պարբերությունը «արտահանվող» բառից հետո լրացնել «և Հայաստանի Հանրապետություն ներմուծվող» բառերով, իսկ «նկատմամբ» բառից հետո՝ «սահմանային հսկողության կետերում» բառերով.

18) որոշման N 1 հավելվածի 11-րդ կետում և ամբողջ տեքստում «դոզաչափ» բառը փոխարինել «դոզիմետր» բառով, «ճառագայթաակտիվ» բառը՝ «ռադիոակտիվ» բառով.

19) որոշման N 1 հավելվածի 18-րդ կետում «ճառագայթային ազդեցության ենթարկված» բառերը փոխարինել «ճառագայթահարման» բառով.

20) որոշման N 1 հավելվածի 22-րդ կետում և ամբողջ տեքստում «ՀՀ ԱԻՆ ՓԾ ճգնաժամային կառավարման կենտրոնը» բառերը փոխարինել «ՀՀ ԱԻՆ ՓԾ ճգնաժամային կառավարման ազգային կենտրոնը» բառերով.

21) որոշման N 1 հավելվածի 26-րդ կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 12-րդ ենթակետով.

«12) ՆՊՄԻ և ՇՊՄՊ գոտիների բնակչության ազդարարման համակարգի ստեղծման և անխափան աշխատանքի ապահովման համար պատասխանատու են ՀԱԷԿ-ը և Հայաստանի Հանրապետության էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարությունը».

22) որոշման N 1 հավելվածի 37-րդ կետում «հերթապահ ուժերի ղեկավարը» բառերը փոխարինել «օպերատիվ հերթափոխի պետը» բառերով.

23) որոշման N 1 հավելվածի 38-րդ կետում «ՀՓԾ Արագածոտնի, Շիրակի և Կոտայքի մարզային փրկարարական վարչությունների» բառերը փոխարինել «ՀՀ ԱԻՆ ՓԾ Արագածոտնի, Շիրակի և Կոտայքի մարզային փրկարարական վարչությունների ճգնաժամային կառավարման կենտրոնների» բառերով.

24) որոշման N 1 հավելվածի 41-րդ կետում «մարզային փրկարարական վարչության դիսպետչերական կետ» բառերը փոխարինել «մարզային ճգնաժամային կառավարման կենտրոն» բառերով.

25) որոշման N 1 հավելվածի 44-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«44. ՇՊՄՊ գոտում բնակչության ազդարարումն իրականացվում է ՀՀ ԱԻՆ ՓԾ Արմավիրի և Արագածոտնի մարզային փրկարարական վարչությունների ՋԿԿ օպերատիվ հերթապահների և (կամ) ՀՀ ԱԻՆ ՓԾ ճգնաժամային կառավարման ազգային կենտրոնից՝ «Ճառագայթային վտանգ» ազդանշանը հնչեցնելու միջոցով:».

26) որոշման N 1 հավելվածի 60-րդ կետում «որակավորվում» բառը փոխարինել «դասակարգվում» բառով.

27) որոշման N 1 հավելվածի 62-րդ կետում «միջուկային վթարի առաջացման վտանգի և միջուկային վթարի առաջացման» բառերը փոխարինել «միջուկային վթարի կամ դրա իրական սպառնալիքի» բառերով.

28) որոշման N 1 հավելվածի 87-րդ կետից հանել «փրկարարական ուժերի վարչության» բառերը:

29) որոշման N 12 հավելվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ՝ նոր՝ 6-րդ, 7-րդ, 8-րդ, 9-րդ, 10-րդ, 11-րդ և 12-րդ կետերով.

«6. Վթարային ճառագայթահարման իրավիճակներում ստոխաստիկ էֆեկտների ռիսկի նվազեցման նպատակով կիրառվող պաշտպանական գործողությունների և հակազդման այլ միջոցառումների համար ընդհանուր չափանիշները.

Ընդհանուր չափանիշները		Պաշտպանական գործողությունների և հակազդման այլ միջոցառումների օրինակներ
Կանխատեսվող դոզա, որը կգերազանցի ստորև ներկայացվող ընդհանուր չափանիշները		
$H_{վահանաձև գինձ}$	50 mSv առաջին 7 օրվա ընթացքում	վահանաձև գեղձի արգելափակում
E	100 mSv առաջին 7 օրվա ընթացքում	պատասպարում, տարահանում, ապակաթիվացում, աղտոտված տեղական արտադրության սննդամթերքի, կաթի և խմելու ջրի օգտագործման սահմանափակում, ռադիոակտիվ աղտոտվածության մոնիթորինգի, բնակչության շրջանում տեղեկատվական-բացատրական աշխատանքի անցկացում
$H_{ոլորտ}$	100 mSv առաջին 7 օրվա ընթացքում	
Կանխատեսվող դոզա, որը կգերազանցի ստորև ներկայացվող ընդհանուր չափանիշները (հակազդման վաղ փուլում իրականացնել պաշտպանական գործողություններ և հակազդման այլ միջոցառումներ)		
E	100 mSv մեկ տարվա ընթացքում	վերաբնակեցում, ապակաթիվացում, աղտոտված տեղական արտադրության սննդամթերքի, կաթի և խմելու ջրի փոխարինում, բնակչության շրջանում տեղեկատվական-բացատրական աշխատանքի անցկացում
$H_{ոլորտ}$	100 mSv ներարգանդային զարգացման ամբողջ ժամկետի համար	
Ստացված դոզա, որը գերազանցում է ստորև ներկայացվող ընդհանուր չափանիշները (ճառագայթահարման պատճառով առողջության համար հետևանքների հայտնաբերման ու բուժման նպատակով ձեռնարկել երկարաժամկետ բժշկական միջոցառումներ)		
E	100 mSv մեկ ամսվա ընթացքում	ճառագայթազգայուն օրգանների կողմից ստացված համարժեք դոզաների հիման վրա գանգվածային դիսպանսերիզացիայի (սկրինինգի) անցկացում որպես հետագա բժշկական հետազոտման համար հիմք, խորհրդատվության անցկացում
$H_{ոլորտ}$	100 mSv ներարգանդային զարգացման ամբողջ ժամկետի համար	անհատական հանգամանքներում հիմնավորված որոշումների կայացման նպատակով խորհրդատվության անցկացում

ա) ներկայացված դոզային մակարդակներից բարձր ճառագայթման դոզաներից կարելի է խուսափել համապատասխան պաշտպանական գործողությունների իրականացմամբ՝ հաշվի առնելով հնարավոր հապաղումների կամ բնական պատճառներով պաշտպանական գործողության արդյունավետության նվազեցումը.

բ) արգելվում է մարդկանց պատասպարել երկու օրվանից ավելի ժամանակով: Կարելի է իրականացնել նաև կարճաժամկետ պատասպարում՝ միջամտման ավելի ցածր մակարդակի դեպքում կամ դրան հետևող այլ պաշտպանական գործողությունների (օրինակ՝ տարահանման) հեշտ իրականացման նպատակով.

գ) արգելվում է մարդկանց տարահանել ավելի քան մեկ շաբաթվա ընթացքում և ոչ ավելի, քան մեկ ամիս ժամանակով: Արագ և հեշտությամբ տարահանման նպատակով

պետք է գործողությունն սկսել ավելի ցածր միջամտման մակարդակների դեպքում: Միջամտման բարձր մակարդակները կարող են հիմնավորված լինել միայն այն դեպքում, երբ տարահանումը դժվար է, այսինքն, երբ պետք է տարահանվի բնակչության մեծ խումբ, կամ կան փոխադրման կամ վատ եղանակի հետ կապված դժվարություններ.

դ) ներկայացված է վահանաձև գեղձի կանխարգելիչի դոզայի քանակությունը՝ պայմանավորված ռադիոակտիվ յոդով: Ելնելով գործնական նկատառումներից՝ մարդկանց տարիքային բոլոր խմբերի համար այս միջամտման մակարդակը նույնացված է:

7. Վթարային ճառագայթահարման իրավիճակներում օգտագործվող դոզիմետրիկ մեծությունները.

Դոզիմետրիկ մեծությունը	Պայմանական նշանակումը	Նպատակը
ճառագայթային պաշտպանության մեծությունները		
ՀԿԱ-ից կախված կլանված դոզա	AD_T	օրգանի կամ հյուսվածքի ճառագայթահարման դեպքում առաջացող դետերմինացված էֆեկտների գնահատման համար
Համարժեք դոզա	H_T	օրգանի կամ հյուսվածքի ճառագայթահարման դեպքում առաջացող ստոխաստիկ էֆեկտների գնահատման համար
Արդյունաբար դոզա	E	ճառագայթահարված բնակչության ստոխաստիկ էֆեկտների հետ կապված վնասի գնահատման համար
գործողությունների ժամանակ օգտագործվող մեծությունները		
Անհատական դոզայի համարժեք	$H_p(d)$	մարդու արտաքին ճառագայթահարման դոզիմետրիկ հսկողության համար
Ամբիենտ դոզայի համարժեք	$E(d)$	վթարային իրավիճակներում տեղանքում ճառագայթահարման դաշտերի դոզիմետրիկ հսկողության համար

8. Սուր ճառագայթահարման դոզաների ընդհանուր չափանիշները, որոնց դեպքում ենթադրվում է, որ լուրջ (ծանր) դետերմինացված էֆեկտները բացառելու կամ նվազագույնի հասցնելու նպատակով պաշտպանական գործողությունները և հակազդման այլ միջոցառումները պետք է իրականացվեն ցանկացած պարագայում:

Ընդհանուր չափանիշները		Պաշտպանական գործողությունների և հակազդման այլ միջոցառումների օրինակներ
Արտաքին սուր ճառագայթահարում (<10 ժամից)		<p>Եթե կանխատեսվում է դոզայի ստացում, ապա անհրաժեշտ է՝</p> <ul style="list-style-type: none"> - դոզաներն ընդհանուր չափանիշներից ցածր պահելու նպատակով անմիջապես ձեռնարկել նախազգուշական պաշտպանական գործողություններ (տոյնիսկ դժվար պայմաններում), - ապահովել բնակչության տեղեկացումն ու նախազգուշացումը, - անցկացնել շտապ ապաստարանի փակում: <p>Եթե արդեն դոզա է ստացվել, ապա անհրաժեշտ է՝</p> <ul style="list-style-type: none"> - անհապաղ անցկացնել բժշկական հետազոտում, խորհրդատվություն և բուժման նշանակում, - իրականացնել ռադիոակտիվ աղտոտվածության մոնիթորինգ, - անցկացնել անհապաղ դեկորպորացիա՝ գ) (եթե դա կիրառելի է), - անցկացնել գրանցում՝ առողջության երկարաժամկետ հսկման (հետազայում բժշկական դիտարկման) համար, - ապահովել հոգեբանների կողմից բազմակողմանի խորհրդատվությունը:
AD(Δ) _{նսրածոծ} ^{ա)}	1 Gy	
AD _{խոտ}	0.1 Gy	
AD _{Հտանսծ} ^{բ)}	25 Gy 0.5 cm խորության վրա	
AD _{Մաշկ} ^{գ)}	10 Gy 100 cm ² մակերեսի վրա	
Ներքին ճառագայթահարում սուր ներթափանցման (Δ=30օր) հետևանքով ^{դ)}		
AD(Δ) _{նսրածոծ}	0.2 Gy այն ռադիոակտիվ իզոտոպների համար, որոնց ատոմային համարը $Z \geq 90$ ^{ե)} 2 Gy այն ռադիոակտիվ իզոտոպների համար, որոնց ատոմային համարը $Z \leq 89$ ^{զ)}	
AD(Δ) _{էսհանսան} ^{զ)}	2 Gy	
AD(Δ) _{Թոքեր} ^{կ)}	30 Gy	
AD(Δ) _{Հստտտտիք}	20 Gy	
AD(Δ) _{նսրածոծ} ^{բ)}	0.1 Gy	

ա) $AD(\Delta)_{նսրածոծ}$ -ն ուժեղ ներթափանցող ճառագայթման համասեռ դաշտում ներքին հյուսվածքների և օրգանների (օրինակ՝ ոսկրածուծը, թոքերը, բարակ աղիքները, գոնադները, վահանաձև գեղձը) և աչքի ոսպնյակի կողմից ստացված ՀԿԱ-ից կախված միջին կլանված դոզան է,

բ) դոզա, որն ստացվել է հյուսվածքի կողմից 100 cm² մակերեսով մարմնի մակերեսից 0.5 cm խորության վրա ռադիոիզոտոպային աղբյուրի հետ անմիջական շփման հետևանքով (օրինակ՝ աղբյուրը ձեռքերում կամ գրպանում կրելու հետևանքով),

գ) դոզա, որն ստացվել է 100 cm² մակերեսով դերմայի (մաշկի արտաքին մակերեսից 40 mg/cm² (0.4 mm) խորության վրա մաշկի կտուցվածքի) կողմից,

դ) $AD(\Delta)$ -ն ՀԿԱ-ից կախված կլանված դոզա է, որն ստացվել է Δ ժամանակահատվածում օրգանիզմ I_{05} ներթափանցման արդյունքում և ճառագայթահարված անձանց 5 տոկոսի մոտ հանգեցնում է լուրջ (ծանր) դետերմինացված էֆեկտի առաջացման,

ե) կոնկրետ ռադիոակտիվ իզոտոպների ներթափանցման շենային արժեքների հաշվառման համար այդ խմբի ռադիոակտիվ իզոտոպների համար կիրառվում են տարբեր չափանիշներ,

զ) դեկորպորացիայի համար ընդհանուր չափանիշը հիմնված է առանց դեկորպորացիայի ստացված դոզային կանխատեսման վրա: Դեկորպորացիան օրգանիզմում քիմիական կամ կենսաբանական ազենտների միջոցով կատարվող կենսաբանական պրոցեսներն են, որոնց հետևանքով օրգանիզմից հեռացվում են ինկորպորացված ռադիոակտիվ իզոտոպները,

է) ելնելով սույն ընդհանուր չափանիշների նպատակներից՝ «թոքեր» նշանակում է շնչառական ուղու ավիոլար-ինտերստիցյալ հատվածը,

ը) տվյալ դեպքում «Δ» նշանակում է ներարգանդային զարգացման ժամանակահատվածը:

9. Դաշտային դոզիմետրիկ չափումների համար նախապես հաշվարկված միջամտման աշխատանքային մակարդակների (ՄԱՄ-1 - ՄԱՄ-4) արժեքները.

Միջամտման աշխատանքային մակարդակը	Միջամտման աշխատանքային մակարդակի արժեքը	Ձեռնարկվելիք միջամտման գործողությունը
շրջակա միջավայրի պարամետրերի չափումները		
ՄԱՄ-1	1000 $\mu\text{Sv/h}$ – գամմա ճառագայթման ամբիենտ դոզայի հզորությունը՝ մակերեսից կամ աղբյուրից 1 m հեռավորության վրա 2000 counts/s – բետա աղտոտվածությամբ մակերեսից հաշվման արագությունը՝ 50 counts/s – ալֆա աղտոտված մակերեսից հաշվման արագությունը՝	ՄԱՄ-1-ի արժեքի գերազանցման դեպքում անհրաժեշտ է՝ - իրականացնել անհապաղ տարահանում կամ տրանադրել ապաստարան ^{ա)} - ապահովել տարահանվողների ապասկտիվացումը ^{բ)} - նվազեցնել ռադիոակտիվ նյութերի ոչ դիտավորյալ պերօրալ ներթափանցումը ^{գ)} . - դադարեցնել տեղական արտադրության սննդամթերքի ^{դ)} , անձրևաջրի ու ռադիոակտիվ աղտոտված տարածքներում արածող կենդանիների կաթի օգտագործումը. - իրականացնել տարահանվածների գրանցում և ապահովել նրանց բժշկական հետազոտումը. - անցկացնել բժշկական հետազոտություն:
ՄԱՄ-2	100 $\mu\text{Sv/h}$ – գամմա ճառագայթման ամբիենտ դոզայի հզորությունը՝ մակերեսից կամ աղբյուրից 1 m հեռավորության վրա 200 counts/s – բետա աղտոտվածությամբ մակերեսից հաշվման արագությունը՝	ՄԱՄ-2-ի արժեքի գերազանցման դեպքում անհրաժեշտ է. - դադարեցնել տեղական արտադրության սննդամթերքի ^{դ)} , անձրևաջրի ու ռադիոակտիվ աղտոտված տարածքներում արածող կենդանիների կաթի օգտագործումը.

	<p>10 counts/s – ալֆա աղտոտվածությանը մակերեսից հաշվման արագությունը^f</p>	<p>- ժամանակավոր վերաբնակեցնել տվյալ տարածքում ապրող բնակչությանը: Վերաբնակեցումից առաջ նվազեցնել ռադիոակտիվ նյութերի ոչ դիտավորյալ պերորալ ներթափանցումը^{b)}: Անցկացնել տվյալ տարածքում գտնվող անձանց գրանցում և նրանց ճառագայթահարման դոզաների գնահատում՝ որոշելու համար բժշկական դիսպանսերիզացիայի հիմնավորվածությունը: Առաջին մի քանի օրվա ընթացքում անցկացնել հնարավոր առավել ռադիոակտիվ աղտոտվածությանը գոտիներից մարդկանց վերաբնակեցումը.</p> <p>- եթե ինչ-որ մեկը գործ է ունեցել աղբյուրի հետ, որից 1 m³ հեռավորության վրա դոզայի հզորությանը հավասար է կամ այն գերազանցում է 100 μSv/h, ապահովել բժշկական հետազոտման ու գնահատման անցկացում: Անհրաժեշտ է անհապաղ անցկացնել նման աղբյուրի հետ շփված բոլոր հղի կանանց բժշկական հետազոտություն ու ճառագայթահարման դոզաների գնահատում:</p>
<p>ՄԱՄ-3</p>	<p>1 μSv/h– գամմա ճառագայթման ամբիենտ դոզայի հզորությունը մակերեսից կամ աղբյուրից 1 m հեռավորության վրա 20 counts/s - բետա աղտոտվածությանը մակերեսից հաշվման արագությունը^f 2 counts/s - ալֆա աղտոտվածությանը մակերեսից հաշվման արագությունը^{g)}</p>	<p>ՄԱՄ-3-ի արժեքի գերազանցման դեպքում անհրաժեշտ է.</p> <p>- դադարեցնել տեղական արտադրության կենսականորեն ոչ կարևոր^{b)} սննդամթերքի^{h)}, անձրևաջրի ու ռադիոակտիվ աղտոտված տարածքներում արածող կենդանիների^{b)} կաթի օգտագործումն այնքան ժամանակ, քանի դեռ չի անցկացվել դրանց համատարած հետազոտումը, և դրանց աղտոտվածության մակարդակները չեն գնահատվել ՄԱՄ-5-ի և ՄԱՄ-6-ի օգտագործմամբ.</p> <p>- անցկացնել տեղական արտադրության սննդամթերքի, անձրևաջրի ու ռադիոակտիվ աղտոտված տարածքներում արածող կենդանիների^{b)} կաթի համատարած հետազոտում այն գոտում, որն առնվազն 10 անգամ գերազանցում է այն հեռավորությունը, որտեղ ՄԱՄ-3-ը գերազանցված է և փորձանմուշները գնահատվել են ՄԱՄ-5-ի և ՄԱՄ-6-ի օգտագործմամբ.</p> <p>- թարմ (մոտակա ժամերին տեղի ունեցած) տրոհման արգասիքների^{d)} կամ ռադիոակտիվ յոդով աղտոտման դեպքում, եթե հնարավոր է, անմիջապես իրականացնել տեղական արտադրության կարևոր^{b)} սննդամթերքի և կաթի փոխարինում մաքուր սննդամթերքով ու կաթով, վահանաձև գեղձի^{d)} յոդային պրոֆիլակտիկայի արագ անցկացման հնարավորության դիտարկում.</p> <p>- գնահատել այն անձանց ճառագայթահարման դոզան, ովքեր հնարավոր է, որ օգտագործել են տեղական արտադրության սննդամթերք, կաթ կամ անձրևաջուր, որոնց նկատմամբ մտցվել է սահմանափակում:</p>
<p>մաշկի ռադիոակտիվ աղտոտվածության չափում</p>		
<p>ՄԱՄ-4</p>	<p>1 μSv/h– գամմա ճառագայթման ամբիենտ դոզայի հզորությունը մաշկից 10 cm հեռավորության վրա 1000 counts/s - բետա աղտոտվածությանը մաշկից հաշվման արագությունը^f 50 counts/s - ալֆա</p>	<p>ՄԱՄ-4-ի արժեքի գերազանցման դեպքում անհրաժեշտ է՝</p> <p>- ապահովել մաշկային ծածկույթների ապասկտիվացում^{h)} և նվազեցնել ռադիոակտիվ նյութերի ոչ դիտավորյալ պերորալ ներթափանցումը^{g)}.</p> <p>- անցկացնել տվյալ տարածքում գտնվող անձանց գրանցում և նրանց բժշկական հետազոտում:</p>

	աղտոտվածությանը մաշկից հաշվման արագությունը՝	
--	--	--

1) միջամտման աշխատանքային մակարդակների արժեքները պետք է վերանայվեն այն դեպքում, երբ հայտնի կդառնա, թե ինչ ուղիղակիորեն իզոտոպներ են առկա: Միջամտման աշխատանքային մակարդակների արժեքները պետք է վերանայվեն նաև այն նպատակով, որպեսզի դրանք համապատասխանեցվեն չափիչ սարքերի ցուցմունքներին: Դրա հետ մեկտեղ, արագ արձագանքման դեպքում իրավիճակի կոնսերվատիվ գնահատման համար միջամտման աշխատանքային մակարդակների՝ նախապես հաշվակված արժեքները, որոնք ներկայացված են սույն աղյուսակում, կարող են օգտագործվել առանց վերահաշվարկի՝

ա) մեծ բազմաբնակարանային շենքերի կամ աղյուսով շարված պատեր ունեցող մեծ շենքերի փակ դահլիճներում և պատերից ու պատուհաններից հեռավորության վրա.

բ) եթե անմիջապես ապաստարանի վայրում կատարել հնարավոր չէ, ապա տարահանվածներին պետք է խորհուրդ տրվի հնարավորինս արագ լողանալ և կեղտոտված հագուստը փոխել.

գ) հարկավոր է տարահանվածներին խորհուրդ տալ չխմել, չուտել և չծխել այնքան ժամանակ, քանի դեռ ձեռքերը լվացված չեն.

դ) տեղական արտադրության սննդամթերք է համարվում այն մթերքը, որն աճել է բաց երկնքի տակ և կարող է արտանետման պատճառով աղտոտված լինել ու շաքարներով օգտագործվում է (օրինակ՝ կանաչեղենը).

ե) արտաքին ճառագայթահարման դոզային հզորության այս չափանիշը կիրառվում է միայն վտանգավոր փակ ուղիղաձուգային աղբյուրների նկատմամբ, և վթարային իրավիճակում այն վերանայելու կարիք չկա.

զ) չափումը կատարվում է ռադիոակտիվ աղտոտվածության դոզիմետրիկ հսկողության համապատասխան մեթոդաբանության կիրառմամբ.

է) կարևոր սննդամթերքի տեսակների օգտագործման սահմանափակումը կարող է հանգեցնել առողջության համար լուրջ հետևանքների (օրինակ՝ սուր թերսնման), ինչի պատճառով նման սահմանափակում կարելի է մտցնել, երբ կա փոխարինող սննդամթերք.

ը) տվյալ տարածքում արածող փոքր եղջերավոր անասունների համար կարելի է կիրառել ՄԱՄ-3-ի 10 տոկոսին հավասար մակարդակ.

թ) բնական տեղումների, հիմնականում անձրևի հետ թափվող ռադոնի տրոհման արգասիքները կարող են հանգեցնել ֆոնային չափումների ժամանակ հաշվիչի արագության քառակի կամ ավելի մեծացման: Ստացվող տվյալները չի կարելի խառնել վթարային իրավիճակով պայմանավորված տվյալների հետ: Ռադոնի տրոհման արգասիքներով պայմանավորված՝ հաշվիչի արագությունն արագ կնվազի անձրևը դադարելուց հետո.

ժ) միայն մի քանի օրվա ընթացքում և միայն այն դեպքում, երբ չկա փոխարինող սննդամթերք.

ժա) միջուկային տրոհման արգասիքներն առաջացել են անցած ամսվա ընթացքում և այդ պատճառով պարունակում են մեծ քանակությամբ ռադիոակտիվ յոդ:

10. Լարորատոր անալիզի արդյունքում սննդամթերքում, կաթում և խմելու ջրում հայտնաբերված ռադիոակտիվ իզոտոպների գումարային ակտիվության համար նախապես հաշվարկված միջամտման աշխատանքային մակարդակի (ՄԱՄ-5) արժեքները.

Միջամտման աշխատանքային մակարդակը	Միջամտման աշխատանքային մակարդակի արժեքը	Ձեռնարկվելիք միջամտման գործողությունը
ՄԱՄ-5	գումարային բետա ակտիվությունը՝ 100 Bq/kg	բարձր է ՄԱՄ-5-ից՝ գնահատել՝ օգտագործելով ՄԱՄ-6-ը
	գումարային ալֆա ակտիվությունը՝	ցածր է ՄԱՄ-5-ից՝ վթարային իրավիճակում

	5 Bq/kg	օգտագործման համար անվտանգ է
--	---------	-----------------------------

11. Լաբորատոր անալիզի արդյունքում սննդամթերքում, կաթում և խմելու ջրում հայտնաբերված առանձին ռադիոակտիվ իզոտոպների խտության համար նախապես հաշվարկված միջամտման աշխատանքային մակարդակների (ՄԱՄ-6) արժեքները.

Ռադիոակտիվ իզոտոպը	Միջամտման աշխատանքային մակարդակը (ՄԱՄ-6) Bq/kg	Ռադիոակտիվ իզոտոպը	Միջամտման աշխատանքային մակարդակը (ՄԱՄ-6) Bq/kg	Ռադիոակտիվ իզոտոպը	Միջամտման աշխատանքային մակարդակը (ՄԱՄ-6) Bq/kg	Ռադիոակտիվ իզոտոպը	Միջամտման աշխատանքային մակարդակը (ՄԱՄ-6) Bq/kg
H-3	2x10 ⁵	V-48	3x10 ⁴	Ge-77	6x10 ⁶	Y-93	1x10 ⁶
Be-7	7x10 ⁵	V-49	2x10 ⁵	As-72	4x10 ⁵	Zr-88	3x10 ⁴
Be-10	3x10 ³	Cr-51	8x10 ⁵	As-73	3x10 ⁴	Zr-93	2x10 ⁴
C-11	2x10 ⁹	Mn-52	1x10 ⁵	As-74	3x10 ⁴	Zr-95	6x10 ³ +
C-14	1x10 ⁴	Mn-53	9x10 ⁴	As-76	4x10 ⁵	Zr-97	5x10 ⁵ +
F-18	2x10 ³	Mn-54	9x10 ³	As-77	1x10 ⁶	Nb-93m	2x10 ⁴
Na-22	2x10 ³	Mn-56	3x10 ⁷	Se-75	4x10 ³	Nb-94	2x10 ³
Na-24	4x10 ⁶	Fe-52	2x10 ⁶ +	Se-79	7x10 ²	Nb-95	5x10 ⁴
Mg-28	4x10 ⁵ + ^{u)}	Fe-55	1x10 ⁴	Br-76	3x10 ⁶	Nb-97	2x10 ⁸
Al-26	1x10 ³	Fe-59	9x10 ³	Br-77	5x10 ⁶	Mo-93	3x10 ³
Si-31	5x10 ⁷	Fe-60	7x10 ¹	Br-82	1x10 ⁶	Mo-99	5x10 ⁵ +
Si-32	9x10 ²	Co-55	1x10 ⁶	Rb-82	1x10 ⁶	Tc-95m	3x10 ⁴ +
P-32	2x10 ⁴	Co-56	4x10 ³	Rb-81	8x10 ⁷	Tc-96	2x10 ⁵
P-33	1x10 ⁵	Co-57	2x10 ⁴	Rb-83	7x10 ³	Tc-96m	2x10 ⁹
S-35	1x10 ⁴	Co-58	2x10 ⁴	Rb-84	1x10 ⁴	Tc-97	4x10 ⁴
Cl-36	3x10 ³	Co-58m	9x10 ⁷	Rb-86	1x10 ⁴	Tc-97m	2x10 ⁴
Cl-38	3x10 ³	Co-60	8x10 ²	Sr-82	5x10 ³ +	Tc-98	2x10 ³
K-40	NA ^{h, q)}	Ni-59	6x10 ⁴	Sr-85	3x10 ⁴	Tc-99	4x10 ³
K-42	3x10 ⁶	Ni-63	2x10 ⁴	Sr-85m	3x10 ⁹	Tc-99m	2x10 ⁸
K-43	4x10 ⁶	Ni-65	4x10 ⁷	Sr-87m	3x10 ³	Ru-97	2x10 ⁶
Ca-41	4x10 ⁴	Cu-64	1x10 ⁷	Sr-89	6x10 ³	Ru-103	3x10 ⁴
Ca-45	8x10 ³	Cu-67	8x10 ⁵	Sr-90	2x10 ⁵ +	Ru-105	2x10 ⁷
Ca-47	5x10 ⁴ +	Zn-65	2x10 ³	Sr-91	3x10 ⁶	Ru-106	6x10 ² +
Co-60	8x10 ²	Zn-69	6x10 ³	Sr-92	2x10 ⁷	Rh-99	1x10 ⁵
Sc-44	1x10 ⁷	Zn-69m	3x10 ⁶ +	Y-87	4x10 ⁵ +	Rh-101	8x10 ³
Sc-46	8x10 ³	Ga-67	1x10 ⁶	Y-88	9x10 ³	Rh-102	2x10 ³
Sc-46	8x10 ³	Ga-68	2x10 ³	Y-90	9x10 ⁴	Rh-102m	5x10 ³
Sc-47	4x10 ⁵	Ga-72	1x10 ⁶	Y-91	5x10 ³	Rh-103m	5x10 ⁹
Sc-48	3x10 ⁵	Ge-68	3x10 ³ +	Y-91m	2x10 ⁹	Rh-105	1x10 ⁶
Ti-44	6x10 ² +	Ge-71	5x10 ⁶	Y-92	1x10 ⁷	Pd-103	2x10 ⁵ +
Pd-107	7x10 ⁴	I-124	1x10 ⁴	Nd-147	6x10 ⁴	Ho-166	5x10 ⁵
Pd-109	2x10 ⁶	I-125	1x10 ³	Nd-149	8x10 ⁷	Ho-166m	2x10 ³
Ag-105	5x10 ⁴	I-126	2x10 ³	Pm-143	3x10 ⁴	Er-169	2x10 ⁵
Ag-108m	2x10 ³ +	I-129	NA ^d	Pm-144	6x10 ³	Er-171	6x10 ⁶
Ag-110m	2x10 ³ +	I-131	3x10 ³	Pm-145	3x10 ⁴	Tm-167	1x10 ⁵
Ag-111	7x10 ⁴	I-132	2x10 ⁷	Pm-147	1x10 ⁴	Tm-170	5x10 ³

Ռադիոակտիվ իզոտոպը	Միջամտման աշխատանքային մակարդակը (ՄԱՄ-6) Bq/kg	Ռադիոակտիվ իզոտոպը	Միջամտման աշխատանքային մակարդակը (ՄԱՄ-6) Bq/kg	Ռադիոակտիվ իզոտոպը	Միջամտման աշխատանքային մակարդակը (ՄԱՄ-6) Bq/kg	Ռադիոակտիվ իզոտոպը	Միջամտման աշխատանքային մակարդակը (ՄԱՄ-6) Bq/kg
Cd-109	3x10 ³	I-133	1x10 ⁵	Pm-148m	1x10 ⁴ +	Tm-171	3x10 ⁴
Cd-113m	4x10 ²	I-134	2x10 ³	Pm-149	3x10 ⁵	Yb-169	3x10 ⁴
Cd-115	2x10 ⁵ +	I-135	2x10 ⁶	Pm-151	8x10 ⁵	Yb-175	4x10 ⁵
Cd-115m	6x10 ³	Cs-129	1x10 ⁷	Sm-145	2x10 ⁴	Lu-172	1x10 ⁵
In-111	1x10 ⁶	Cs-131	2x10 ⁶	Sm-147	1x10 ²	Lu-173	2x10 ⁴
In-113m	4x10 ³	Cs-132	4x10 ⁵	Sm-151	3x10 ⁴	Lu-174	1x10 ⁴
In-114m	3x10 ³	Cs-134	1x10 ³	Sm-153	5x10 ⁵	Lu-174m	1x10 ⁴
In-115m	5x10 ⁷	Cs-134m	3x10 ³	Eu-147	8x10 ⁴	Lu-177	2x10 ⁵
Sn-113	1x10 ⁴ +	Cs-135	9x10 ³	Eu-148	2x10 ⁴	Hf-172	2x10 ³
Sn-117m	7x10 ⁴	Cs-136	4x10 ⁴	Eu-149	9x10 ⁴	Hf-175	3x10 ⁴
Sn-119m	1x10 ⁴	Cs-137	2x10 ³ +	Eu-150b	3x10 ⁶	Hf-181	2 x10 ⁴
Sn-121m	5x10 ³ +	Sn-126	5x10 ² +	Eu-150a	4 x 10 ³	Hf-182	1 x10 ³ +
Sn-123	3x10 ³	Sb-122	2x10 ⁵	Eu-152	3 x 10 ³	W-178	2 x 10 ⁵ +
Sn-125	2x10 ⁴	Sb-124	5x10 ³	Eu-152m	4 x 10 ⁶	W-181	1 x 10 ⁵
Sb-126	3x10 ⁴	Sb-125	3x10 ³ +	Eu-154	2 x 10 ³	W-185	2 x 10 ⁴
Te-121	1x10 ⁵	Ba-131	1x10 ⁵ +	Eu-155	1 x 10 ⁴	W-187	1 x 10 ⁶
Te-121m	3x10 ³ +	Ba-133	3x10 ³	Eu-156	2x10 ⁴	W-188	3 x 10 ³ +
Te-123m	5x10 ³	Ba-133m	9x10 ⁵	Gd-146	8x10 ³ +	Re-184	2 x 10 ⁴
Te-125m	1x10 ⁴	Ba-140	1x10 ⁴ +	Gd-148	1x10 ²	Re-184m	3 x 10 ³ +
Te-127	1x10 ⁷	La-137	4x10 ⁴	Gd-153	2x10 ⁴	Re-186	1 x 10 ⁵
Te-127m	3x10 ³ +	La-140	2x10 ⁵	Gd-159	2x10 ⁶	Re-187	5 x 10 ⁵
Te-129	2x10 ³	Ce-139	3x10 ⁴	Tb-157	9x10 ⁴	Re-188	7 x 10 ⁵
Te-129m	6x10 ³ +	Ce-141	3x10 ⁴	Tb-158	3x10 ³	Re-189	8 x 10 ⁵
Te-131	4x10 ³	Ce-143	5x10 ⁵	Tb-160	7x10 ³	Os-185	2 x 10 ⁴
Te-131m	3x10 ⁵	Ce-144	8x10 ² +	Dy-159	7x10 ⁴	Os-191	8 x 10 ⁴
Te-132	5x10 ⁴ +	Pr-142	6x10 ⁵	Dy-165	7x10 ⁷	Os-191m	1 x 10 ⁷
I-123	5x10 ⁶	Pr-143	4x10 ⁴	Dy-166	6x10 ⁴ +	Os-193	7 x 10 ⁵
Os-194	8 x 10 ² +	Pb-212	2 x 10 ⁵ +	Np-237	9 x 10 ¹ +	Cm-246	5 x 10 ¹
Ir-189	2 x 10 ⁵	Bi-210	1 x 10 ⁵	Ac-225	3 x 10 ³	Cf-253	3 x 10 ⁴
Ir-190	6 x 10 ⁴	Bi-210m	2 x 10 ²	Ac-227	5.0 +	Cf-254	3 x 10 ¹
Ir-192	8 x 10 ³	Bi-212	7 x 10 ⁷ +	Ac-228	7 x 10 ⁶	Es-253	5 x 10 ³
Ir-194	6 x 10 ⁵	Po-210	5.0	Pu-236	1 x 10 ²		
Pt-188	6 x 10 ⁴ +	At-211	2 x 10 ³ +	Pu-237	2 x 10 ⁵		
Pt-191	9x10 ⁵	Au-199	5 x 10 ⁵	Pu-238	5 x 10 ¹		
Pt-193	3 x 10 ⁵	Th-227	9 x 10 ¹ +	Pu-239	5 x 10 ¹		
Pt-193m	3 x 10 ⁵	Th-228	2 v 10 ¹ +	Pu-239/Be-9	5 x 10 ¹		
Pt-195m	3 x 10 ⁵	Th-229	8.0 +	Pu-240	5 x 10 ¹		
Pt-197	2 x 10 ⁶	Th-230	5 x 10 ¹	Pu-241	4 x 10 ³		
Pt-197m	1 x 10 ³	Th-231	2 x 10 ⁶	Pu-242	5 x 10 ¹		
Ta-178a	1 x 10 ³	Th-232	4.0	Pu-244	5 x 10 ¹ +		
Ta-179	6 x 10 ⁴	Th-234	8 x 10 ³ +	Am-241	5 x 10 ¹		
Ta-182	5 x 10 ³	Pa-230	5 x 10 ⁴	Am-242m	5 x 10 ¹ +		
Hg-194	2 x 10 ² +	Pa-231	2 x 10 ¹	Am-243	5 x 10 ¹ +		
Hg-195	2 x 10 ⁷	Pa-233	3 x 10 ⁴	Am-244	4 x 10 ⁶		
Hg-195m	8 x 10 ⁵	U-230	8 x 10 ² +	Am-241/Be-9	5 x 10 ¹		

Ռադիոակտիվ իզոտոպը	Միջամտման աշխատանքային մակարդակը (ՄԱՄ-6) Bq/kg	Ռադիոակտիվ իզոտոպը	Միջամտման աշխատանքային մակարդակը (ՄԱՄ-6) Bq/kg	Ռադիոակտիվ իզոտոպը	Միջամտման աշխատանքային մակարդակը (ՄԱՄ-6) Bq/kg	Ռադիոակտիվ իզոտոպը	Միջամտման աշխատանքային մակարդակը (ՄԱՄ-6) Bq/kg
Hg-197	1×10^6	U-232	2×10^4	Cm-240	4×10^3		
Hg-197m	2×10^6	U-233	1×10^2	Cm-241	3×10^4		
Hg-203	1×10^4	U-234	2×10^2	Cm-242	5×10^2		
Tl-200	5×10^6	U-235	$2 \times 10^2 +$	Cm-243	6×10^1		
Tl-201	3×10^6	U-236	2×10^2	Cm-244	7×10^1		
Tl-202	2×10^5	U-238	$1 \times 10^2 +$	Cm-245	5×10^1		
Tl-204	3×10^3	Np-235	7×10^4	Cm-247	6×10^1		
Pb-201	2×10^7	Np-236L	$8 \times 10^2 +$	Cm-248	1×10^1		
Pb-202	$1 \times 10^3 +$	Np-236s	4×10^6	Bk-247	2×10^1		
Pb-203	2×10^6	Np-239	4×10^5	Bk-249	1×10^4		
Pb-205	2×10^4	Ra-223	$4 \times 10^2 +$	Cf-248	2×10^2		
Pb-210	2.0 +	Ra-224	$2 \times 10^3 +$	Cf-249	2×10^1		
Bi-205	7×10^4	Ra-225	$2 \times 10^2 +$	Cf-250	4×10^1		
Bi-206	8×10^4	Ra-226	$2 \times 10^1 +$	Cf-251	2×10^1		
Bi-207	3×10^3	Ra-228	3.0	Cf-252	4×10^1		

ա) ներկայացված միջամտման աշխատանքային մակարդակները վերաբերում են տեղական արտադրության սննդամթերքին և կիրառվում են այլընտրանքային սննդի մատակարարման առկայության դեպքում.

բ) սահմանված միջամտման աշխատանքային մակարդակները կիրառվում են անմիջական օգտագործման համար նախատեսված տեղական արտադրության չվերամշակված սննդամթերքի համար: Չոր և խտացված (կոնցենտրացված) սննդամթերքի համար, դրանց վերամշակման ժամանակ ռադիոիզոտոպային կազմի փոփոխման պատճառով, սահմանված միջամտման մակարդակները կարող են համարվել չհիմնավորված.

գ) ելնելով գործնական նկատառումներից՝ ռադիոակտիվ իզոտոպների տարբեր խմբերի համար սահմանված միջամտման աշխատանքային մակարդակները պետք է դիտարկել որպես այդ ռադիոակտիվ իզոտոպների ակտիվությունների գումար.

դ) քիչ քանակությամբ օգտագործվող սննդամթերքի համար (օրինակ՝ համեմունքների համար) միջամտման աշխատանքային մակարդակները, համեմատած հիմնական

սննդամթերքի հետ, կարող են մեծ լինել մինչև 10 անգամ, որովհետև սննդամթերքի այդ տեսակները չեն կարող առաջացնել ներքին ճառագայթահարման զգալի դոզա:

ե) ներկայացված միջամտման աշխատանքային մակարդակները գործում են վթարից հետո մեկ տարվա ընթացքում, որից հետո, ելնելով շրջակա միջավայրի ճառագայթային մոնիթորինգի արդյունքներից, կարգավորող մարմնի կողմից պետք է հաստատվեն նոր միջամտման աշխատանքային մակարդակներ՝ որպես եղած ճառագայթահարման իրավիճակ:

12. Ելնելով վթարային հակազդման պահանջներից՝ վթարային պատրաստվածության դասերը:

Վթարային պատրաստվածության դասը	Սպառնալիքի նկարագրությունը
I	Սպառնալիք՝ կապված այնպիսի տեղակայանքների հետ, ինչպիսիք են, օրինակ, ատոմային էլեկտրական կայանները, որոնց տարածքում տեղի ունեցած միջադեպերը (ներառյալ արտանախագծային միջադեպերը) կանխորոշվում են որպես այնպիսիք, որոնք տեղակայանքի տեղադրման հրապարակի տարածքի սահմաններից դուրս կարող են հանգեցնել առողջության համար լուրջ դետերմինացված էֆեկտների, կամ նման միջադեպերը գրանցվել են որպես այլ նմանատիպ տեղակայանքում տեղի ունեցած:
II	Սպառնալիք, կապված ատոմային էլեկտրակայաններից տարբեր միջուկային տեղակայանքների հետ, որոնց ներքին միջադեպերը կարող են հանգեցնել դրանց հարակից տարածքների բնակչության ճառագայթահարման դոզաների այնպիսի բարձրացման, երբ անհրաժեշտ կլինի ձեռնարկել միջազգային նորմերին համապատասխանող շտապ կամ վաղ պաշտպանական գործողություններ, կամ նման միջադեպերը գրանցվել են որպես այլ նմանատիպ տեղակայանքում տեղի ունեցած: Սպառնալիքի II դասը (ի հակադրում սպառնալիքի I կատեգորիայի) չի ներառում այն տեղակայանքները, որոնց համար հրապարակի վրա տեղի ունեցած միջադեպերը (ներառյալ արտանախագծային վթարները) սահմանվում են որպես այնպիսիք, որոնք կարող են բերել ծանր դետերմինացված էֆեկտների հրապարակ, կամ, որի նման միջադեպերը գրանցվել են որպես այլ նմանատիպ տեղակայանքում տեղի ունեցած:
III	Սպառնալիք, կապված արդյունաբերական ճառագայթահարիչների կամ որոշ տիպի բժշկական տեղակայանքների հետ, որոնց կապված ներքին միջադեպերը կարող են հանգեցնել ճառագայթահարման դոզաների այնպիսի բարձրացման կամ ռադիոակտիվ աղտոտվածության, երբ անհրաժեշտ կլինի տեղում իրականացնել շտապ պաշտպանական գործողություններ կամ այլ հակազդման միջոցառումներ, կամ նման միջադեպերը գրանցվել են որպես այլ նմանատիպ տեղակայանքում տեղի ունեցած:

<p>IV</p>	<p>Սպառնալիք, որը կապված է այնպիսի գործունեության կամ գործողության հետ, որը կարող է հանգեցնել միջուկային կամ ճառագայթային վթարային իրավիճակի, երբ անհրաժեշտ կլինի նախապես չսահմանված տեղում իրականացնել շտապ պաշտպանական գործողություններ կամ այլ հակագրման միջոցառումներ: Որպես այդպիսի գործունեություն կամ գործողություն կարող են լինել՝</p> <p>ա) միջուկային կամ ռադիոակտիվ նյութերի փոխադրումը կամ այնպիսի թույլատրված գործողություններ, որոնք կապված են շարժական ռադիոիզոտոպային աղբյուրի հետ, ինչպիսիք են, օրինակ, արդյունաբերական ռադիոգրաֆիկ շարժական ճառագայթահարիչները, միջուկային սնուցմամբ արբանյակները, ռադիոիզոտոպային ջերմաէլեկտրագներատորները կամ ստացիոնար փակ աղբյուրները, ինչպես նաև I - III դասերի ռադիոիզոտոպային աղբյուրի առևանգումն ու օգտագործումը որպես ռադիոակտիվ նյութեր տարածող կամ պայթուցիկ սարք: Այս դասը նաև ներառում է, ճառագայթման մակարդակի բարձրացման գրանցում անհայտ պատճառով կամ ռադիոակտիվ աղտոտվածությամբ ապրանքներ:</p> <p>բ) գերճառագայթահարման հետևանքով ի հայտ եկած բժշկական ախտանիշների որոշում:</p> <p>գ) անդրսահմանային վթարի սպառնալիք, որը չի դիտարկվում որպես V կատեգորիայի սպառնալիք: IV կատեգորիայի սպառնալիքի դեմ պատրաստվածությունը ներդնելի է բոլոր պետությունների համար:</p>
<p>V</p>	<p>Սպառնալիք I կամ II կատեգորիայի տեղակայանքների վթարային պլանավորման գոտիների ներսում այն տարածքների համար, որոնք չեն պատկանում այն պետությանը, որի տարածքում տեղադրված է տեղակայանքը (այսինքն՝ պետական սահմանից այն կողմ են գտնվում): »:</p>

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ

Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ